ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2025 թվականի N 1384-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Պ. ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ 11 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՐԳԵՆ ՍՏԵՓԱՆԻ ՂԱՋՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 11.08.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 26.09.2025թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Գուրգեն Ստեփանի Ղաջոյանի /ծնված 11.01.1959թ-ին/ լիազորված անձ /լիազորագիր 50 ԱՎ 2425930/ Հեղինե Խաչատուրի Խանդանյանի /ծնված 28.07.1965թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Պ. Պռոշյան փողոց 11 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.04713 հա, որը Գուրգեն Ստեփանի Ղաջոյանին /ծնված 11.01.1959թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 267.37 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950-1990թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.04713 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Պ. Պռոշյան փողոց 11 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Գուրգեն Ստեփանի Ղաջոյանի /ծնված 11.01.1959թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.04713 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 267.37 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1950-1990թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Մ. Նալբանդյան փողոց, 4-րդ փակուղի, 6 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 27
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 հոկտեմբերի 2025 թվականի N 1385-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 1850-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ՋԱՐԳԱՐՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՆՏԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հրանտիկ Գուրգենի Վարդանյանի /ծնված 17.10.1957թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, 23.11.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023TQRHKD ծածկագիրը, որի համաձայն քաղաք Գավառ Զարգարյան 2-րդ փողոց թիվ 28 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-001-0338-0013/, ինչը փաստացի կազմում է 0.27380հա, ինչպես նաև հաշվի առնելով, որ փաստացի օգտագործվող 0.27380հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 02-ի թիվ 1850-Ա որոշումը:

2. Վերականգնել Գավառ քաղաքի Սովխոզի նոր համալիր հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հրանտիկ Գուրգենի Վարդանյանի /ծնված 17.10.1957թ./ հողօգտագործման իրավունքը պահեստի կառուցման և սպասարկման համար հատկացված 0.27380հա մակերեսով հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.27380հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ համաձայն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի տրամադրել անհատույց սեփականության իրավունք, հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

3. Հրանտիկ Գուրգենի Վարդանյանի /ծնված 17.10.1957թ./ կողմից ինքնակամ կառուցված 128քմ. մակերեսով շենք-շինությունը /կառուցված 2000թ-ին/ ճանաչել ինքնակամ:

4. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք քաղաք Գավառ Զարգարյան 2-րդ փողոց թիվ 28 հասցեն:

5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 27
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 հոկտեմբերի 2025 թվականի N 1386-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, 12.06.2024թ. կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերի 9.1 կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ քաղաքի Կենտրոնական Հրապարակ N8/2, Ազատության փողոց N24/19, Ազատության փողոց N39/1 և Ա. Բոշնաղյան փողոց N12/1 հասցեների հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի լուծման մասին քաղաքացի Վարդան Ժորայի Ներսիսյանի դիմումը

1. Լուծել Գավառ համայնքի և քաղաքացի Վարդան Ժորայի Ներսիսյանի միջև 12.06.2024թ. կնքված Գավառ քաղաքի Կենտրոնական Հրապարակ N8/2, Ազատության փողոց N24/19, Ազատության փողոց N39/1 և Ա. Բոշնաղյան փողոց N12/1 հասցեների յուրաքանչյուրը 0,00003 /զրո ամբողջ երեք հարյուրհազարերորդական/ հա մակերեսներով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերը:
2. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին քաղաքացի Վարդան Ժորայի Ներսիսյանի հետ լուծելու նշված հասցեների համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 27
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 հոկտեմբերի 2025 թվականի N 1387-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Լյովա Հայկի Ամիրյանին, Գայանե Վալոդի Մոստորյանին, Կարեն Լյովայի Ամիրյանին, Շիրազ Լյովայի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 1355779 տրված 2003 թվականի մայիսի 5-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Լյովա Հայկի Ամիրյանին, Գայանե Վալոդի Մոստորյանին, Կարեն Լյովայի Ամիրյանին, Շիրազ Լյովայի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Լանջաղբյուր հասցեում գտնվող 0.579 հա մակերեսով 05-038-0203-0033 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 27
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2025 թվականի N 1388-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Անդրանիկ Հայկի Հակոբյանին, Մայրանուշ Վալոդի Հակոբյանին, Մերի Անդրանիկի Հակոբյանին, Զարա Անդրանիկի Հակոբյանին, Մարիամ Հայկի Հակոբյանին, Անդրանիկ Հայկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 29082017-05-0039 տրված 2017 թվականի օգոստոսի 29-ին, վկայական N 29082017-05-0043 տրված 2017 թվականի օգոստոսի 29-ին, վկայական N 29082017-05-0037 տրված 2017 թվականի օգոստոսի 29-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Անդրանիկ Հայկի Հակոբյանին, Մայրանուշ Վալոդի Հակոբյանին, Մերի Անդրանիկի Հակոբյանին, Զարա Անդրանիկի Հակոբյանին, Մարիամ Հայկի Հակոբյանին, Անդրանիկ Հայկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Հայրավանք հասցեում գտնվող 0.431 հա մակերեսով 05-059-0401-0060 կադաստրային ծածկագրով, 0.326 հա մակերեսով 05-059-0409-0051 կադաստրային ծածկագրով, 0.276 հա մակերեսով 05-059-0410-0114 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության Խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 27
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 հոկտեմբերի 2025 թվականի N 1389-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-001-1133-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ «ԲԱՅԱԶԵՏ ՌՈՍ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ ենթակետի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 10 նիստի թիվ 187-Ա որոշումը, Գավառ համայնքի ղեկավարի կողմից 22 հոկտեմբերի 2025 թ-ին տրված N ՆԹ-9454-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը «ԲԱՅԱԶԵՏ ՌՈՍ» ՍՊԸ-ի՝սեփականության իրավունքով /վկայական N 03102025-05-0023/ պատկանող Գավառ համայնքի Գավառ քաղաքային բնակավայրի 05-001-1133-0026 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ դիմումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «այաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, և հաշվի առնելով որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 9.2174 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ քաղաքային բնակավայրի «ԲԱՅԱԶԵՏ ՌՈՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ /վկայական՝ N 03102025-05-0023 տրված 03.10.2025թ.-ին/ 9.2174 հա հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նպատակային նշանակությունից փոխել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային

նշանակության, նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ վարելահողից փոխել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի:

2.Փոփոխված հողամասին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ թիվ 7 հողամաս հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 հոկտեմբերի 2025 թվականի N 1390-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ՀԱՐԱՎ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 15.11.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023EPE4ZL ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած ունձ Մնացական Ժորայի Հակոբյանի դիմումը՝ Գավառ համայնքի ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 137.70 քմ. արտաքին /100,80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված

սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնք ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ ընկած հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00529 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 137.70 քմ. արտաքին /100.80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ համայնք ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ ընկած հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00529 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 137.70 քմ. արտաքին /100.80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 6/23 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 137.70 քմ. արտաքին /100.80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Մնացական Ժորայի Հակոբյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 հոկտեմբերի 2025 թվականի N 1391-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Վոլոդյա Արամայիսի Ասոյանին, Անահիտ Եփրեմի Միքայելյանին, Արա Վոլոդյայի Ասոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 2145842 տրված 2006 թվականի հուլիսի 06-ին, վկայական N 2145843 տրված 2006 թվականի հուլիսի 06-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Վոլոդյա Արամայիսի Ասոյանին, Անահիտ Եփրեմի Միքայելյանին, Արա Վոլոդյայի Ասոյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.0783 հա մակերեսով 05-001-1176-0084 կադաստրային ծածկագրով, 0.4143 հա մակերեսով 05-001-1154-0031 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 30
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 հոկտեմբերի 2025 թվականի N 1392-Ա

ԱՐՏԱՇԵՍ ՎԱՐԴԳԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտաշես Վարդգեսի Մարտիրոսյանը (անձնագիր՝014151336, ՀԾՀ՝ 1102720399 , հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գ.ՀայրավանքՍևանիփողոց 1-ին նրբ.տուն 7), Գավառ համայնքի տարածքում գտնվող «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորատուս տեղամասի Հայրավանք հատվածում իրականացրել է ինքնակամ շինարարություն, ինչի կապակցությամբ 2025 թվականի հունիսի 09-ին ,«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ'' ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված տուգանքի գումարի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրված տվյալների՝ Գավառ համայնքի տարածքում գտնվող «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորատուս տեղամասի Հայրավանք հատվածում գտնվող հողամասի նկատմամբ գրանցված է Արտաշես Վարդգեսի Մարտիրոսյանի օգտագործման իրավունքը, որտեղ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից առանց շինարարության համապատասխան թույլտվության իրականացվել է շինարարություն (ինքնակամ շինարարություն) ինչն հանդիսանումէ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթների խախտում:
Հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինսապատիկից-հազարհինգհարյուրապատիկի չափով:
2025 թվականի հունիսի 09-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետի հիմքովԳավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունիսի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 10.06.2025թ. LO128224385AM ծանուցումը) քաղաքացի Արտաշես Վարդգեսի Մարտիրոսյանը: Վերջինս ներկայացել է վարչական վարույթի լսումներին:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:
Համաձայն ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքներն ու օրինական շահերը: Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի

շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:
Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:
Համաձայն Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական գործունեության սուբյեկտները կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:
Համայնքի ղեկավարը, համաձայն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4/ կետի, համայնքի քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանքներ /նախագծման թույլտվություն/, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, իսկ 28/ կետի՝ օրենքոն նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:
Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթ հարյուր հիսնապատիկից - հազարհինգհարյուրապատիկի չափով:
Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀօրենսգրքի 219.1-րդ հոդվածի տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նույն օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի անունից վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի համայնքի ղեկավարը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքների, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի դրույթներով, ***որոշում եմ***

1.Պարտավորեցնել Արտաշես Վարդգեսի Մարտիրոսյանին ապամոնտաժել Գավառ համայնքի տարածքում գտնվող «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորատուս տեղամասի Հայրավանք հատվածում իրականացված ինքնակամ շինությունները:
2. Գավառ համայնքի տարածքում գտնվող «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորատուս տեղամասի Հայրավանք հատվածում վարձակալած հողատարածքում ինքնակամ շինարարություն իրականացնելու համար Արտաշես Վարդգեսի Մարտիրոսյանին տուգանել 750 000/յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Տուգանքի գումարը ենթակա է վճարման Գավառի համայնքապետարանի 900175101105 հաշվեհամարին:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 հոկտեմբերի 2025 թվականի N 1393-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՐՇԱԿ ԱՐՄԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը և Գավառ համայնք գյուղ Գեղարքունիք Կ. Դեմիրճյան փողոց 4 հասցեի սեփականատեր Արշակ Արմենի Վարդանյանի Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի 05-025-0017-0004 կադաստրային ծածկագրի՝ Արշակ Արմենի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 2139965/ գույքի բաժանումից առաջացած 0.09338 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Գեղարքունիք, Կ. Դեմիրճյան փողոց, 8 բնակելի տուն հասցեն:

2. Գավառ համայնքի 05-025-0017-0004 կադաստրային ծածկագրի՝ Արշակ Արմենի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 2139965/ գույքի բաժանումից առաջացած 0.29975 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Գեղարքունիք, Կ. Դեմիրճյան փողոց, 8/1 հողամաս հասցեն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 31
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
03 նոյեմբերի 2025 թվականի N 1394-Ա

«ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԼԻՊՍԵ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.10396 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 1157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի դրույթներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ղեկավարի 18 օգոստոսի 2025թվականի N 1157-Ա որոշումը, ***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ղեկավարի 18 օգոստոսի 2025թվականի N 1157-Ա որոշման երկրորդ կետում, /ընդամենը 1039.6x155=535400 /հինգ հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ բառերի փոխարեն կարդալ՝ /ընդամենը 1039.6x155=161140 /մեկ հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ բառերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 03
ք. Գավառ